ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

Քաղաքացիական գործ ԵԴ2/2603/02/24

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ

ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻՑ

ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

19-ը ապրիլի 2024թ. ք.Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը /դատավոր Ա. Մկրտչյան/, ուսումնասիրելով «Սմարթիմփայեր» ՍՊ ընկերության հայցադիմումն ընդդեմ ՀՀ վիճակագրական կոմիտեի՝ «ՀՀ ՎԿ-ԲՄԽԾՁԲ-2024/1» ծածկագրով բաց մրցույթի խորհրդատվական ծառայությունների գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրության 27.03.2024թ.-ի կայացված որոշման 23-րդ և 24-րդ կետերն անվավեր ճանաչելու և որպես հետևանք Հայցվորի հայտը գնման ընթացակարգի պայմաններին բավարար գնահատելու և վերջինիս ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

Հայցադիմումը 08.04.2024թ. մակագրվել է դատավոր Ա.Մկրտչյանին:
Դատարանի 12.04.2024թ. որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:
Հայցվորի կողմից Դատարանի արձանագրած թերությունները վերացվել են և հայցադիմումը կրկին ներկայացվել է 16.04.2024թ.:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:
Նույն օրենսգրքի 234.6 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:
Նույն օրենսգրքի 234.8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող անձինք և նրանց ներկայացուցիչները դատական նիստի ժամանակի և վայրի, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում առանձին դատավարական գործողություններ կատարելու մասին ծանուցվում են էլեկտրոնային հաղորդակցության միջոցով ծանուցագրերը և այլ փաստաթղթեր սույն օրենսգրքի 97-րդ հոդվածով սահմանված կարգով հայցադիմումում նշված էլեկտրոնային փոստին ուղարկելու եղանակով:
Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 234.5-րդ, 234.6-րդ, 234.8-րդ, 188-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածներով, Դատարանը

ՈՐՈՇԵՑ

Հայցադիմումն ընդունել վարույթ, հայցադիմումի ներկայացման օր համարել 08.04.2024թ.:

Եզրափակիչ դատական ակտի հրապարկման օր սահմանել 2024թ. մայիսի 31-ը:
Կողմերի ծանուցումն իրականացնել էլեկտրոնային դատավարության համակարգի միջոցով:
Պատասխանող ՀՀ վիճակագրական կոմիտեից պահանջել որոշումն ստանալու օրվանից հնգօրյա ժամկետում էլեկտրոնային դատավարության համակարգի միջոցով Դատարանին ներկայացնել «ՀՀ ՎԿ-ԲՄԽԾՁԲ-2024/1» ծածկագրով բաց մրցույթի խորհրդատվական ծառայությունների գնման ընթացակարգի՝ իր տիրապետության ներքո բոլոր ապացույցները:
Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և բողոքարկման ենթակա չէ:

Signed by: ARAM MKRTCHYAN 1712720074
Date: Fri, 19 Apr 2024 17:40:41 GMT+04:00

Դատավոր՝ Արամ Մկրտչյան

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am